

Թափոնների կառավարում

Ներածություն

Ի՞նչ է թափոնը:

Ամեն տարի ութ միլիոն տոննա պլաստիկ թափոն է հայտնվում ծովում: Որպեսզի պատկերացնենք՝ կապույտ կետը կշռում է 120 տոննա = 44,000 կապույտ կետ: Թափոնների առաջացման գնահատումը և դրանց բաղադրության վերաբերյալ տեղեկությունը շատ կարևոր են թափոնների կառավարման համար, քանի որ այդ տեղեկությունն ազդում է թափոնների հավաքման և մշակման օբյեկտների նախագծման, կառավարման և անվտանգ հեռացման վրա: Տեղեկատվությունը նաև բարձրացնում է իրազեկվածությունը տանը առաջացող թափոնների և այն մասին, թե մարդիկ ինչ կարող են անել՝ նվազագույնի հասցնելու թափոնները և կիրառելու այնպիսի գործելակերպ, ինչպիսիք են՝ թափոնների տարանջատումն ու վերօգտագործումը՝ աջակցելու իրենց քաղաքներում թափոնների կառավարման համակարգերին:

Ի՞նչ է հարցումը:

Չարցումը էլեկտրոնային փոստով, հեռախոսով կամ անձամբ անհատների որոշակի խմբից տեղեկություն հավաքելու մեթոդ է, որն ընդհանուր առմամբ ներկայացնում է հարցմանը մասնակցած բնակչության մի մասը: Այսպիսով հավաքագրված տեղեկությունը սովորաբար կոչվում է տվյալների բազա:

Չարցումներն օգտագործվում են տարբեր մարդկանց կողմից տարբեր ոլորտների վերաբերյալ տեղեկություն հավաքելու համար: Չարցումները կարող են իրականացվել երկու եղանակով՝ կամ որպես կառուցվածքային հարցազրույց, որի ընթացքում հարցվողներին ուղղակիորեն հարցեր են տրվում, կամ որպես հարցաշար, որը մասնակիցը լրացնում է ինքնուրույն: Այս մեթոդաբանություններից յուրաքանչյուրն ունի իր առավելությունները, ինչպես նաև սահմանափակումները: Չարցաթերթիկը, օրինակ, արագ արդյունքներ է տալիս, նաև մատչելի է, սակայն այն սահմանափակված է պատասխանողի ըմբռնմամբ, նրանք կարող են հարցերը չհասկանալ և թողնել անպատասխան:


Չարցումների անցկացումը մանկավարժական գործիք է՝ աշակերտներին զգաստացնելու թափոնների խնդրի վերաբերյալ, բարձրացնելու նրանց ընկալումը, խրախուսելու նրանց գտնել խնդրի լուծման ռազմավարություններ և թափոնների կառավարման փորձը փոխանցել դպրոցում թափոնների կառավարման պրակտիկա կամ համակարգ ստեղծելու միջոցով: Դպրոցում թափոնների վերաբերյալ հետազոտությունները կօգնեն գնահատել դպրոցում արտադրված/առաջացած թափոնների տեսակը և քանակը: Դա կօգնի հասկանալ հավաքագրման և հեռացման ներկայիս համակարգը: Չարցումը կօգնի պլանավորել համապատասխան գործողություններ:

Թափոնների վերաբերյալ հետազոտությունը համայնքի մակարդակով կօգնի ուսանողներին հասկանալ թափոնների կառավարման համակարգերը, տեղական ինքնակառավարման մարմինների դերը ցանկացած քաղաքի/համայնքի թափոնների կառավարման գործում, և ինչպես կարող են քաղաքացիները աջակցել համակարգերի սահուն և արդյունավետ աշխատանքին: Այս տեղեկությունը հավաքելու տարբեր միջոցներ կան: Դրանք ներառում են գնահատումներ՝ չափելով առաջացած թափոնների տարբեր ծավալները, հարցաթերթիկներ կամ հետազոտություններ անցկացնելու այլ միջոցներ:

Ի՞նչ է «տվյալը» և ինչո՞ւմ է կայանում տվյալների ներկայացման անհրաժեշտությունը:

Տվյալները փաստերի հավաքածու են, դրանք են՝ թվերը, բառերը, չափումները, դիտարկումները կամ նույնիսկ իրերի պարզապես նկարագրությունները: Տվյալների ներկայացումը կարող է իրականացվել տարբեր մեթոդների կիրառմամբ. հաշվարկային նշանները, գրաֆիկները և գծապատկերները մեթոդներից մի քանիսն են, որոնք օգտակար կլինեն աշակերտների համար: Տարբեր տեսակի գծապատկերներ կարող են օգտագործվել տարաբնույթ իրավիճակներում և վիզուալիզացիայի ու համեմատության շնորհիվ հեշտացնել ընկալումն ու որոշումների կայացումը:

Թափոնների կառավարումը ներկայացնող գծապատկեր՝ ըստ կգ-ների



Պլաստիկ թափոններ՝ փաստեր և թվեր

Որքան պլաստիկ է հայտնվում օվկիանոսում ամեն տարի



1096

Էյֆելյան աշտարակ



24

Էմփայր Սթեյթ Բիլդինգ



44,444

Կապույտ կետեր



30,180

Պատմության մեջ ամենածանր սումո ըմբիշը՝ Յամամոտայամա Ռյուտը

Աղբյուր՝ Միջազգային բնապահպանական տեխնոլոգիական կենտրոն (Օսակա, Ճապոնիա):